



ԱՐՁԱՆ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ

Ի Ս Գ Ա Լ Ի Մ Ա Հ

ՏԻԿՆՈՋ Ա.Լ.ԷՔՍԱՆԵԱՆ

ԱԶՆՈՒՈՒՀԻ ՓԱՐԻՉ ՀԱՆԸՄԻ

Այնուուհի Տիկին Ալեքսանեան Փարիզ Հանրմի իւր գլխաւորաւ և ուղղորմած բնութիւնն ու անցուցած կեանքը զինքն աշխարհի ծանօթ ըրած էին :

Ամոյս սկիզբները գրեթէ քառանամեայ հասակին մէջ իւր մահկանացու ընթացքը կնքեց առ Աստուած փոխելով Ալեքսանդրիոյ մէջ : Սա բարեպաշտուհի Տիկինը , որպէս զի իւր վախճանէն վերջն ալ անմահ պահէ աշխարհի մէջ իւր բարեաց յիշատակը , իւր կտակն ալ կընթած է կենդանութեանը , կտակահատար որոշելով Տ. Գասպարեան ՍՆԸ . և Ազգասէր Յակոբ ազայն : Սոյն կտակին մէջ կը կտակէ իւր տանը ամեն կահ կարասիքը Ս. Յակոբեանց վանուց Արուսագեմի . որ սոյն կարասեաց արժէիւքը կալուած գնուի Ս. Աթոսոյ՝ հանգուցեալ Բարեպաշտուհի Տիկնոջ և իւր ամուսնոյն ՚ի յիշատակ :

Հանգուցեալ բարեպաշտուհի Փարիզ Հանրմի մահուան յաւերժ յիշատակ կը կանգնեցնէ Ս. Աթոսս տալով իրեն Սուրբ Աւետարանի խոստացած երանութիւնը . « Արանի սղորմածաց , զի նորս գոգորմութիւն գացեն : Սարբ . Ե » :